

ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. Ա. ԱՎԱԳՅԱՆԻ «ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ՍՐՔԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՀՈԳՎԱԾԻ ՎԵՐԱՐՅԱԼ

Պրոֆ. Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտ. աշխատակից Ս. Ա. Ավագյանը վերջերս ապագրած իր հոգվածում դիտողություններ է արել Սանահնի և Հովհաննավանքի արձանագրությունների մեր վերծանության վերաբերյալ և այդ դիտողություններն անվանել է սրբագրություն, հավանաբար ենթադրելով, որ դրանք անառարկելի են։ Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, հոգվածագիրը մի քանի սրբագրությունների կողքին ունի սխալ և անընդունելի դիտողություններ¹։

Հնդունելի են հետևյալ երեք ուղղումները.

1. Հովհաննավանքի վերաբերյալ մեր գրքի 4-րդ արձանագրության անեծքի բանաձևի սկզբի փակագիրը կարդացել ենք դաւ, պետք է լինի աւդ, ինչպես առաջարկել է հոգվածագիրը²։

2. Նույն վանքի № 2 արձանագրության մեջ մեղ համար անհասկանալի մնացած ԺԿ անուն կգաւ բառերի Ժ կանոն կաւգ ուղղումը։ Թեև դրանով չի փակվում անհասկանալի մնացած բառերի խնդիրը³։

3. Հաջող է նաև նույն վանքի № 70 արձանագրության մեջ չժամանեց ուղղումը, որի առաջին գիրը Չ-ի փոխարեն Ձ էինք կարդացել և ենթադրել, որ անտեղի գործածված զ-ն նախդիր է (զժամանեց)⁴։

Որոշ վերապահությամբ կարելի կլինե՞ր ընդունելի համարել նաև Սանահնի վանքի մեր հրատարակության 15-րդ արձանագրության մեջ քարի վրա տեղ գտած ավելորդ է գրի մեկնությունը, իբրև այդ սխալի առաջացման հնարավոր բացահայտություններից մեկը, եթե հոգվածագիրն իր խոսքը չերկարեր (մոտ 10 էջ), այդ է գրի շուրջը քերականական անհաջող խորհրդածություններ չկատարեր և իր հոգվածի տարբեր, չչերում միմյանց ժխտող եզրակացությունների չհանգեր։ Այդ ավելորդ է գիրն արձանագրության սկիզբն է, այսպես՝ «ևս՝ Դաւիթ իշխան, որդի Շոթոռկաէ գնեցի զՈռնակ...»։ Այստեղ Դավիթը ոչ թե Շոթոռկաէ որդուց է գնել Ոռնակն ու այլ կալվածքներ, այլ Շոթոռիկի որդի Դավիթ իշխանն է գնել Ոռնակը։

Այդ է գրի մասին մեր գրքում գրել ենք, որ «Կարող է ավելորդ լինել, քանի որ նա բացասական մասնիկ չէ» և հավանական ենք համարել, որ այդ է գիրը դրված է եղել Դավիթ իշխանի հոր՝ Շոթոռիկի անվան վերջում իբրև սեռական հոլովի մասնիկ, որ կազմված է բարբառի ազդեցությամբ։ Այդ

¹ Ս. Ա. Ավագյան, Վիմագրական սրբագրություններ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 4։

² Կարո Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 77։

³ Նույն տեղում։

⁴ Նույն տեղում, էջ 112։

առթիվ գրել ենք. «Շոթոռկաէ-ն Շոթոռիկի սեռական հոլովն է եղել արձանագրություն կազմողի բարբառում՝ Դաւիթ Շոթոռկաէ ուղի—Դավիթ Շոթոռկի ուղի»⁵:

Ավագյանն այդ ավելորդ է գիրն առաջարկում է միացնել հաջորդ զնեցի բառին և ստանալ էզնեցի բայը, եղի, ետու և այլ նման բայերի օրինակով կազմած: Նա այլ արձանագրություններից բերում է է նախդիրի սխալ գործածության օրինակներ (էհատաւ, էգրեցին):

Այդ ավելորդ է-ի օրինակն աչքի առաջ ունենալով, հոդվածագիրը բացատրում է, որ այդ սխալները, իր կարծիքով, «զուրկ են խոսակցական կամ գրական հիմքից և ծագում են արձանագրությունների հեղինակների կամ փորագրողների՝ հին գրական հայերենին բավարար չափով չտիրապետելուց»⁶:

Նշանակում է, այդ սխալները հետևանք են անգրագիտության և կապ չունեն բարբառների հետ: Դրան հակառակ, իր հոդվածի նախորդ էջում, այդ նույն է-ի մասին ճիշտ հակառակ կարծիք է հայտնել: Այնտեղ նա է (ե) նախածանցի սխալ գործածության մի քանի օրինակներ է բերել վիմական արձանագրություններից և ավելացրել, որ «կարելի էր շարունակել այս օրինակների թվարկումը, սակայն բերված վկայություններն էլ բավական են ցույց տալու, որ ե (է) աճականի կիրառության՝ գրաբարից կատարված շեղումները չի կարելի համարել պատահական վրիպում կամ ավելադրություն, այլ պետք է դիտել իբրև օրինաչափ իրողություն (ընդգծումը մերն է—Կ. Ղ.) X—XIII դարերի հայ վիմագրության մեջ»⁷:

Գրաբարից շեղվելը, ինչպես ասել ենք, արդարացում կունենար միայն այն դեպքում, երբ առաջացած լիներ բարբառների ազդեցության ներքո, իսկ միջին հայերենն ուսումնասիրողների համար այդ շեղումները կլինեին առաջնակարգ նյութ: Խոսելով մեր այն կարծիքի դեմ, թե է գիրը Շոթոռկաէ բառի վերջավորությանն է պատկանում և ցույց է տալիս սեռական հոլով, հոդվածագիրը ասում է. «Այսպիսով, ըստ Կ. Ղաֆադարյանի է-ն տվյալ դիրքում հանդես է գալիս իբրև սեռականի հոլովակազմիչ» և քիչ հետո ավելացնում է. «Այս բացատրությունը միանգամայն անընդունելի է ոչ միայն այն պատճառով, որ սեռական հոլովի կրկնակ հոլովակազմիչների իրողությունը անծանոթ է հին գրական հայերենին, միջին հայերենին, բոլոր հայ բարբառներին, այլև մանավանդ նրանով, որ հայերենի պատմությունը սեռական հոլովի է հոլովակազմիչ չի ճանաչում բաղաձայնով վերջացող անունների համար, որպիսին է Շոթոռիկը»:

Մեր հին մատենագրության և վիմագրության մեջ քաջ հայտնի է Դրիգոր Տուաէուրդին, որ գրած է նաև ուղի Տուտայ: Ախալցխայում մի մարդու բուրրը ճանաչում էին իբրև Հունիկօղլէ Մանուկը⁸:

Նշանակում է, է-ով գրաբարում և բարբառներում սեռական հոլով կազմել են: Ինչ վերաբերում է բաղաձայնով վերջացող բառերին, ապա այդ դեպքում այս օրինակը դարձյալ շեղում կլինի ընդունված կանոնից:

⁵ Կ ա Ր Ո Ղ ա ֆ ա դ ա Ր Յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 108:

⁶ Ս. Ավագյան նշվ. հոդվ., էջ 212:

⁷ Նույն տեղում, էջ 211:

⁸ Շոթոռկաէ, բառի մեջ կարող է անգամ ա-ն ավելորդ լինել և ճիշտ ձևը սեռական հոլովի Շոթոռկէ:

Մի խոսքով, է-ի գործածությունը, լինի անվան վերջավորության վրա, թե բայի առաջին, ոչ մի օրենքի ենթակա չէ և, ինչպես ասել ենք արդեն, ավելորդ է կամ բարբառի ազդեցությամբ է կազմած:

Անընդունելի է նաև Հովհաննավանքի ժամատան՝ մեր հրատարակության 55-րդ արձանագրության մեջ հիշատակվող զԱշտարակո նորֆն՝ նորատունկ այգի համարելը:

Նորֆը տեղանուն ենք համարել և ենթադրել, որ Աշտարակի թաղերից մեկն է եղել⁹:

Նորֆն իբրև նորատունկ այգի հայտնի է վաղուց: Տնտեսագետ Թադևոս Ավդալբեգյանը 1927 թ., պատարագի միջին սակագնին նվիրած իր հոդվածի էջատակի ծանոթություններից մեկի մեջ, մի քանի վիմագրական և մատենագրական (Ջամբո և այլն) օրինակներով հիմնավորել է, որ նորֆ բառը նորատունկ այգի է նշանակել՝ մատնարկ, նորատունկ, նորակերտ, ձեռատունկ բառերի կողքին: Զաքարիա Սարկավագից քաղելով իր տեղեկությունը, Ավդալբեգյանը հիշատակել է նաև Հովհաննավանքի արձանագրության միջի «զԱշտարակո նորֆն», բայց ելնելով հոդվածի բնույթից չի հիմնավորել այդ օրինակի մեջ նորֆ-ի նորատունկ այգի իմաստը¹⁰:

Նորքն իբրև հասարակ բառ, բացի իր ուղղակի իմաստից (նոր-ի հոգնակին՝ նորեր), միայն նորատունկ այգի չի նշանակել: Թ. Ավդալբեգյանը գրել է. «Ինչպես շատ հասարակ անուններ, այս նորատունկն ու նորքը հետագայում դառնում են հատուկ անուններ»:

Այս բանը երևանցիները լավ գիտեն, որովհետև իրենց քաղաքը նորֆ կոչվող թաղամաս ունի, որ հնում առանձին գյուղ է եղել: Երևանի նորֆ ասելով ոչ ոք նորատունկ այգի չի հասկանում: Այդպես է նաև Աշտարակի նորֆը:

Վանքերին այգի կամ այլ գույք նվիրողները սովորաբար գրում են նվերը հատկանշող բառեր: Այսպես, օրինակ.

«Զմեր հայրենի այգիքն և զգնուած զՊապանց այգին, և Զնշանց տունն, և զԴաւթի փրենց հայրենաւքն... ընծայեցաւ ի գրաստունս» (Հաղբատ, արձ. 60, 1273 թ.): Կամ.

«Ես՝ Դաւիթ եկի ի սուրբ Նշանիս առաջին ու զինչ իմ պապն՝ Քուրդն, Ուքանաց թոռն ու իմ հայրն՝ Ուքան սուրբ Նշանիս միաբանութիւն էին տուել հաստատեցի. զսուրբ Սարգսին՝ մուտքն, զԿաթանացն այգին մեզրով և Գ(3) շինական, ձիթատու աւետարան և այլ սպասք եկեղեցւոյ» (Հաղբատ, արձ. № 79, 1243 թ.)¹¹: Եվ կամ.

«էտու զիմ գնուած այգին, որ ի Բերդիկ է» (Հաղբատ, արձ. 84, ԺԳ դար)¹²:

⁹ Եթե Աշտարակը կենտրոնական ավան կամ գյուղ լիներ, կարելի էր ենթադրել, որ նորֆը նրա շրջապատի գյուղերից մեկի անունն է եղել:

¹⁰ Թ ա դ. Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն, Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական զարգացման պատմության համար, «Տեղեկագիր» ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1927, № 2, էջ 55:

¹¹ Եկեղեցու նվիրատուն համարվել է նրա միաբան անգամը, այգ պատճառով էլ արձանագրությունների մեջ նվիրատուն հայտարարել է, որ ինքը միաբանել է վանքին կամ միաբանություն է տվել զանազան իրեր և կալվածքներ:

¹² Բոլոր օրինակները բերել ենք մեր «Հաղբատ» գրքից (Երևան, 1963):

Խ. Ավդալբեգյանի հիշատակած օրինականների մեջ ևս նորքերը (բացի Աշտարակի նորքից) նույն ձևով են հանդես գալիս: Նրանց մեջ, բացի վայրի անունից, հատկանշող որևէ բառ կա: Օրինակ. «Գնեցաք զՏանձուտն, Ջոշիկի նորքն ի Ռ(1000) սպիտակի» կամ «Նտու... զհայրենիքն դնորսն»: Մեկն էլ հիշատակված է իբրև «զՎարդենաց նորքն»:

Հովհաննավանքի արձանագրության մեջ եթե նորքը այգի լիներ, պետք է դրվեր մոտավորապես այսպես. «գնեցաք նորք մի յԱշտարակ և տուաք սրբոցս», բայց քանի որ գրված է «Գնեցաք զԱշտարակո նորքն և տվաք ի սուրբքս», նշանակում է, որ Աշտարակի նորքը ոչ թե ինչ որ մի նորատունկ այգի է, այլ բոլորին հայտնի նրա միակ նորքն է, որ կարող է գյուղ կամ թաղամաս լինել, այլապես պետք է ենթադրենք, թե Աշտարակն ունեցել է բոլորին հայտնի միայն մի նորատունկ այգի:

Թաղամասը (կամ գյուղը) գնելու հանգամանքը մեզ չպետք է զարմացնի, քանի որ այդ բովանդակությամբ բազմաթիվ արձանագրություններ կան: Զպետք է մոռանանք, որ այդ նույն ժամանակ Պարոն Ավետյաց որդի Սահմադինը ամբողջ Երևանն էր գնել իր հողով ու ջրով¹³:

Ս. Ավագյանը մեզ մեղադրում է, որ Հովհաննավանքի միաբանների որոշումը՝ վախճանված միաբանների հիշատակին ժամ հասկացնելու վերաբերյալ (մեր հրատարակության 2-րդ արձանագրությունը), վերագրել ենք վանքի առաջնորդ հաշիկին¹⁴:

Նա գրում է, որ «Վերժանողի կարծիքով (այսինքն մեր կարծիքով—Կ. Ղ.) այն մի վանական կարգադրություն է հաշիկ վարդապետի անունից գրված», հետո ավելացնում է. «Բնագրի վերժանության մեջ մեր կատարած մասնակի լրացումներից և շտկումներից հետո պարզ է դառնում, որ այստեղ գործ ունենք ոչ թե վանահայր հաշիկի «վանական կարգադրության», այլ ամբողջ եղբայրության, բոլոր միաբանների հաստատած կարգի կամ օրինականացման հետ... «ուրեմն,— քիչ հետո շարունակում է հոդվածագիրը,— հաստատել են ուխտի միաբանները և ոչ թե հաշիկ առաջնորդը»:

Միջնադարյան վանքերը թեև եկեղեցական կանոնների մեջ իբրև թե հավասարության և եղբայրության սկզբունքների վրա են հիմնված հղել, բայց Հովհաննավանքի այդ արձանագրությունից էլ երևում է, որ այդ եղբայրները, բացի վանքի ընդհանուր կալվածքներից և սեփականությունից, ունեցել են իրենց մասնավոր սեփականությունը, մեկը՝ շատ, մյուսը՝ քիչ, ինչ որ իրենք վանք են բերել (բացի վանքին տվածից) և ինչ որ կարողացել են անհատապես ձեռք բերել միաբան եղած ժամանակ:

Ըստ արձանագրության, միաբաններից յուրաքանչյուրին զատ յընչից իւրոց, մահվանից հետո, մատուցվելու էր երկու քառասունք: Հասկանալի է, որ նրանց թողած ինչքի համար էլ առանձին ժամ կամ պատարագ է տրվելու:

¹³ Կ. Ղ ա ֆ ա ղ ա ռ յ ա ն, Երևանի կաթողիկոսի և նորահայտ հուշարձանի վիճական արձանագրությունները, «Տեղեկագիր» ՀՍՍՀ պատմության և գրականության ինստիտուտի, Ա գիրք, Երևան, 1938, էջ 171:

Ի միջի այլոց, Աշտարակի նորքն իր մեջ արտահայտող արձանագրությունը սկզբնագիր չէ: Գրված է եղել եկեղեցու արևմտյան պատի լավ երևացող տեղում, հետո այնտեղ կանդնեցրել են մի մեծ խաչքար, որը մեծ մասամբ փակել է արձանագրությունը, ուստի որոշ կրոնատուներով արտագրել են խաչքարից վերև նույն պատին, երևացող մասի որոշ բառեր բացակայում են արտագրության մեջ: Արտագրությունը կատարել են նույն XIII դարում:

¹⁴ Ս. Ա վ ա գ յ ա ն, նշվ. հոդվ., էջ 222:

Ֆեոդալական Հայաստանի վանահայրերն ու եկեղեցական առաջնորդները գրեթե միահեծան տեր են եղել իրենց վանքում: Նրանք մեծ մասամբ իշխանական տան անդամներից են նշանակվել և հաստատվել են աշխարհիկ և հոգևոր բարձր իշխանության կողմից:

Իշխանական տներին ենթակա դիխավոր եպիսկոպոսները մեծ իրավունքներ ունեին գավառական եպիսկոպոսների և վանքերի նկատմամբ: Շահապիվանի կանոնների մեջ ասված է.

«Բայց որ գլխաւոր եպիսկոպոսն աշխարհին առանց նորա կամաց եպիսկոպոս ոք մի լիցի: Եւ վանաց երէց կամ անապատաւոր առանց գաւառին եպիսկոպոսի շիշխէ լինել»¹⁵:

Այստեղ էլ նույն աստիճանական նվիրապետությունն էր տիրում, ինչ որ աշխարհիկ իշխանության մեջ:

Շատ անգամ վանահայրերը եկեղեցու գործերու վարել են ինքնագլուխ կերպով, առանց միաբանության կամքի, այդ պատճառով եկեղեցական կանոնների մեջ արգելք է դրվել նրանց ինքնագլուխ գործունեության, որպեսզի միաբանության մեջ դժգոհություն և հերձվածք չառաջանա:

Առաքյալներին վերագրվող կանոնների մեջ ասված է.

«Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, թե չէ իշխանութիւն քահանայապետի կամ երիցու և ո՛ր իցէ առաջնորդ եկեղեցւոյ առանց իւրոց պաշտոնակցացն առնել զիրս ինչ յեկեղեցւոջ. բայց կամաւք և միաբանութեամբ ամենեցուն արասցեն, զոր ինչ կամինն, զի մի լիցի տրտմութիւն և հերձուածք ի միջի իւրեանց, զի ի միաբանութենէ ամենեցուն և քարոզութիւնն հաւատարիմ լիցի, և հաւատն հաստատուն»¹⁶:

Անգամ կանոնից երևում է, որ առաջնորդները «զոր ինչ կամինն» (ինչ որ կամենում են), պետք է միաբանության կամքով կատարեն, նրանց համաձայնությամբ, որպեսզի դժգոհություն և հերձվածք չառաջանա նրանց միջև:

Այդ է պատճառը, որ եկեղեցական գործերին վերաբերող որոշումների մեջ առաջնորդի անվան կողքին նշվում է նաև միաբանության համաձայնությունը: Օրինակ.

«Եւ առաջնորդ սորա Զաքարիա վարդապետ հանդերձ Կ(60) միաբանօր խոստացան պատարմդել...» (Հովհաննավանք, արձ. 12, 1639 թ.):

«Եւ սպասաւորք սորա՝ Մկրտիչ եպիսկապոս և եղբարքս խոստացան...» (Հովհաննավանք, արձ. 36, 1243 թ.):

«Եւ մեք՝ տէր Յովանէս, լրմամբ եղբարցս, սիրով ընկալաք...» (Հաղբատ, արձ. 6, XIII դար):

Երբեմն առաջնորդի անունը, անգամ պաշտոնը չի հիշատակվում, այլ միայն գրված է լինում «Եւ միաբանքս խոստացան» կամ «սոքա ետուն», «սոքա խոստացան»:

Կան նաև արձանագրություններ, որոնց մեջ վանահայրը կամ առաջնորդը, խախտելով կանոնները, ինքնագլուխ կարգադրություններ է անում առանց միաբանության կամքը հարցնելու:

¹⁵ «Կանոնագիրք հայոց», հատ. Ա, աշխատասիրությամբ Վաղգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 455:

¹⁶ Նույն տեղում, էջ 39—40:

Այսպես, օրինակ.

«Ես՝ տէր Սարգիս հաստատեցի ղՍահակս և ղհաշարիս ղյիշատակն...» (Հաղբատ, արձ. 23, 1067 թ.): Կամ.

«Եւ ես՝ տէր Գրիգոր սահմանեցի ղԱստվածածնին կիրակէն...» (Անի, արձ. 81, ժամանակը չի որոշված հրատարակչի կողմից, բայց XI—XIII դդ. է)¹⁷: Եվ կամ.

«Ես՝ տէր Սարգիս, որդի Մաքիստոսին ղայս հաստատեցի...» (Անի, արձ. 62, ժամանակը դարձյալ անորոշ): Այս արձանագրության մեջ խոսքը բռնապսակն արգելելու մասին է:

Ինքնագլուխ են եղել և շատ անգամ ձեականորեն իսկ միաբանության կամքի հետ հաշվի չեն նստել առաջնորդներն ու վաներեցները, իսկ աշխարհիկ տերերը, հոգևոր դասից անկախ, միջամտել են նրանց գործերին և կարգադրություններ արել, պարտադրելով, որ նրանք կատարեն: Ինչպես իրենք են գրում, լուծ են դրել միաբանության վրա:

Զաքարե ամիրսպասալարը Հաղբատի արձանագրություններից մեկում, որ վանքի կալվածքների կարգավորման և տուրքերից ազատելուն է վերաբերում, գրում է.

«Եւ եղի լուծ ի վերա սոցա ղայն, որ ի մեծ եկեղեցին ղաւագ խորանին պատարագն անխափան յիմ՝ Զաքարիայի անուն մատուցանեն յայսմ հետէ, որ թիւ հայոցս է ՈՅԹ—մինչ ի գալուստն Քրիստոսի»¹⁸:

Անիի Խամբուշենց եկեղեցու արձանագրություններից մեկում Սողոմոնի որդի Հովհաննեսն իր մեղքերի թողության համար 20 դահեկան է նվիրել եկեղեցուն և լուծ է դրել սպասավորների վրա, որպեսզի ամեն տարի երկու ժամ կատարեն¹⁹:

Անի քաղաքի առաջնորդ տեր Սարգիսը եկեղեցական հասույթների վերաբերյալ կարգադրություններ է արել, որոնք նա համաձայնեցրել է ոչ թե հոգևորականների, այլ քաղաքի ամիրա (քաղաքապետ) Երկաթի հետ: Նա գրում է.

«Ես՝ տէր Սարգիս, որդի Ապիրատին, առաջնորդ մայրաքաղաքիս Անույ և կամակցութեամբ ամիրաիս Երկաթա... ազատեցաք...»²⁰:

Մեծահարուստ և վաշխառու Տիգրան Հոնենցն ավելի առաջ է գնացել. նա իր կառուցած Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համար քահանաներ է կարգել, առանց հիշատակելու, թե ում հետ է համաձայնեցրել: Հետաքրքիր է, որ վանահայրերին և առաջնորդներին իշխաններ է անվանում: Նա գրում է. «չինեցի ղվանքս... կարգեցի ի սմայ քահանայք», հետո ավելացնում է իր մեծ արձանագրության մեջ.

«Շինեցի ղամենայն ցեղ ղբնակարան վանականաց և իշխանաց»: Հասկանալի է, որ վանքի իշխանները նրա վանահայրերն են:

Բոլոր պարագաներում պարզ է լինելու պատմաբանին, որ վանքերի միաբանները առաջնորդից անկախ որևէ որոշում չէին կարող կայացնել:

¹⁷ «Դիվան հայ վիմագրության», պրակ Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 26: Անիի մյուս արձանագրությունները ևս հիշատակված են նույն գրքից:

¹⁸ «Հաղբատ», էջ 169, արձ. 37:

¹⁹ «Դիվան հայ վիմագրություն», պրակ Ա, էջ 51:

²⁰ Նույն տեղում, էջ 17:

Զարմանալին այն է, որ սրբագրող հեղինակը չի նկատել, որ զուտ ձևական տեսակետով էլ մենք իրավացի էինք այդ որոշումը վերադրելու հաշիկ առաջնորդին: Արձանագրության մեջ գրված է. «Յառաջնորդության հաշիկա եւ միաբանք ուխտիս հաստատեցաք...»²¹: Սւ շաղկապի վրա հոգւածագիրը ուշադրութիւն չի դարձրել և քերականորեն չի պարզաբանել նրա իմաստը: Դրա փոխարեն նա ուխտիս բառը առաջին տողում երկու անգամ է դրել, գուցե և դա ճիշտ է. բայց եւ շաղկապն այստեղ պարզ նշան է այն բանի, որ այդ որոշումը հաստատել են վանքի առաջնորդ հաշիկը եւ միաբանութեան մյուս անդամները, այլապես այդ եւ շաղկապը ավելորդ կլինէր:

Նշանակում է՝ ձևական տեսակետով էլ այդ որոշումը կարելի է վերագրել վանքի առաջնորդին:

Հաշիկի այդ արձանագրության ընդհանուր բովանդակութիւնը հասկանալի է, բայց որոշ բառեր և դարձվածքներ համառոտագրված են այնպես, որ այժմ մեզ համար դժվար է վերծանել: Այդ պատճառով մեր գրքում գրել ենք, որ «Երրորդ տողի բառերն անհասկանալի են»: Ավագյանը փորձել է վերծանել դրանք:

Յույց տալու համար, թե ինչ է իրենից ներկայացնում նրա վերծանութիւնը, մեջ ենք բերում միայն արձանագրության երրորդ տողը և չորս գիրք էլ երկրորդ տողից, որոնք անիւզելիորեն կապված են հաջորդ տողի հետ:

«Եւ ի ժամարարն ար: Ա: Ժամ, և որք միաբանք ժկանոն կարգ»²²:

Ինչո՞ւ է ժամարար բառն աղավաղվել և ժ գիրը գլխագրով գրվել, ի՞նչ է նշանակում ի (20) ժամարարն, մի՞թե եկեղեցին չՍ ժամարար է ունեցել, ի՞նչ գործ ունի ժամարար բառի վերջին ն գիրը, կամ ի՞նչ են նշանակում և որք միաբանք ժ կանոն կարգ բառերը:

* * *

Մական Բարխուդարյանցը «Արցախում» հիշատակում է մի խաչքար Պաբանախի Նոր Կողբ գյուղում, որ նրա ասելով քանդակել են Աբելն ու տէր Աւագը: Արձանագրության վերջում գրված է՝ «ԿԱՐԷՒ և տէր Աւագ կազմող խաչիս յիշեցէք ի տէր»²³:

Ս. Ավագյանը գտնում է, որ Բարխուդարյանցը սխալվել է: Այդտեղ հիշատակվողներից առաջինը ոչ թե Աբելն է, այլ Սամէլը և Բարխուդարյանցի սխալը ցույց տալու համար արտագրել է նրա գրքից ընդամենը վեց բառ, բայց բազմաթիվ սխալներով (ԶԱՔԵՒ ԵՒ ՏԵՐԱԻԱԳ ԿԱԶՄՈՂ ԽԱՉԻՍ):

Աբէլ և տէր բառերի է գրերը Ե-ով է ներկայացրել, որի պատճառով Աբել արական անձնանունը փոխվել է իգական Զաբել անվան:

Աղավաղել է նաև տէր Աւագ-ի անունը: Տէր տիտղոսից և Աւագ անունից մի բառ է կազմել, որ իբրև թէ խաչքարի կազմող երկու վարպետներից մեկի անունն այդպես է եղել—ՏԵՐԱՎԱԳ, այն էլ տէր բառը միշտ Ե-ով գրված:

Անվան այդ աղավաղումը Ավագյանն անուշադրութեամբ վերագրել է նաև Բարխուդարյանցին, չակերտների մեջ առած մեջբերման ժամանակ տէր Աւագ անունը գրել է իբրև մի բառ (Տերաւագ):

²¹ Նույն տեղում, էջ 188:

²² Ս. Ավագյան, նշվ. հոդվ., էջ 221:

²³ Մական Եպիս. Բարխուդարյանց. Արցախ, Բագու, 1895, էջ 385:

Բոլոր բառերը գլխագրով է գրել, իսկ Բարխուդարյանցի մոտ հասարակ գրով են:

Ս. Ավագյանը տէր Աւագ բառերը Տերաւագ է դարձրել՝ պատճառաւորով, որ այդ ձևն իրեն ավելի հավանական է թվում: Նա իր հոգվածի էջատակի ծանոթություններից մեկի մեջ գրում է. «Մեզ ավելի հավանական է թվում այս անձնանվան Տերաւագ ձևը. եթե բնագրի Տեր (դարձյալ ե-ով) բառը ցույց տար սոսկ ԱԻԱԳ-ի հոգևորական լինելը, ապա փորագրված կլինե՞ր ՏՐ հասկանալի ձևով»²⁴:

Կարելի է բազմաթիվ օրինակներ բերել ցույց տալու համար, որ հոգվածագիրը ճիշտ չէ:

Անձնանունները հաճախ գրվել են հապավումներով՝ Ջրհա—Ջաքարիտ, Համ—Համազասպ, Պտսին—Պետրոսին և այլն:

Տէր բառը իր սովորական առումով գրվել է նաև լրիվ, առանց հապավման:

Սանահնի մեծ գավթի տապանաքարերից մեկի վրա կարդում ենք. «Աւագն է, տէրն Եղիվարդա»: Տէր բառը գրված է առանց հապավման: Սա աշխարհական իշխան է եղել:

Նույնը տեսնում ենք նաև Հաղբատում: Մեծ գավթի մեջ, մի տապանաքարի վրա կարդում ենք. «Տէր Գրիգորէսի Եղբայրն է»²⁶: Այստեղ Տէր Գրիգորէսը հոգևորական է, բայց տէր բառը գրված է առանց հապավման:

Սանահնի գրատան արձանագրություններից մեկի վերջին մասում գրված է. «Ով խափանէ՝ մեր մեղացն տէր է»: Այստեղ ևս տէր բառը թեև անձնանվան հետ կապ չունի, բայց գրված է առանց հապավման²⁷:

Այսպիսով տեսնում ենք, որ Ս. Ավագյանի այն ենթադրությունը, թե առանց հապավման տէր-ի գործածությունը ցույց է տալիս նրա կրողի հոգևորական լինելը, միանգամայն անհիմն է: Այլ վայրերից էլ հայտնի են հոգևորական կոչումով քանդակող վարպետներ:

* * *

Մի քանի խոսք Ս. Ավագյանի՝ իր հոգվածում հրատարակած արձանագրությունների մասին:

Այժմ արձանագրություններ հրատարակելու գիտական ձև է մշակված՝ լուսանկարի հետ հրատարակում են գծագիր պատկերը, բնագրի վերծանությունը և դժվարիմաց բառերի մեկնությունը:

Ս. Ավագյանն իր հոգվածում առաջին անգամ հրատարակել է երկու արձանագրություն, այն էլ առանց լուսանկարի և գծագրի պատկերի: Ոչ մի հնարավորություն չկա այդ արձանագրությունների ճշտությունը ստուգել առանց արձանագրած քարը տեսնելու: Արձանագրություններից մեկի թվականը լավ չերևալու պատճառով չի ընդօրինակել, բայց բաց թողած գրերի տեղում կետեր չի դրել: Խաչիկի տապանաքարի վերծանության մեջ կասկածելի է «որ էր մշակ եկեղեցո առանց ամաթոն»: Է-ի փոխարեն կասկածելի է-ի գրության կիրառումներ կան այդտեղ՝ կեսարե (կիսարե), յաշխարհէն (յաշխարհէն), որ հազիվ թե բնագրում այդպես լինի:

²⁴ Ս. Ավագյան, նշվ. հոգվ., էջ 223:

²⁵ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 141 (աբձ. 68):

²⁶ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 189 (աբձ. 54 լԲ):

²⁷ Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 149: